

ԿՐԵԿԸ.

ԲԺ. ԸՐ. ՕՋԱՆԵՄՆ.

Մեր գարում մարդիկ այնքան են ընտելացել կրակի գործանութեան, այնքան հեշտութեամբ են այն ստանում, որ շատ-շատերի մաքով երբեք չէ անցնում, որ եղել է ժամանակ, երբ մարդ կամ մարդանման կենդանին բոլորովին անտեղեակ էր կրակ հանելու արհեստին, և երբ պատահմամբ մի որ և է միջոցով կրակ էր ստանում, չէր կարողանում երկար ժամանակ վառ պահել այն և երբ հանգչում էր, մնում էր առանց կրակի:

Առանց կրակի... Բնյ կը լինէր այժմեան մարդի վիճակը, եթէ նա զրկուէր բնութեան այդ թանգագին պարզեւից, սիրակի գին էս առում է հայ ժողովուրդը, երբ ուզում է մի առարկայի որակութիւնը բարձրացնել, կրակի գիւտը, ակներև, մարդուս ամենագլխաւոր քալերից մէկն է յառաջագիմական ճանապարհի վրայ: Հաւանական է, որ նախնական մարդըն երկար ժամանակուայ ընթացքում գեռ չէր իմանում կրակ հանել, ինչպէս ծովափայ Մագելանի օրերով Մարիանեան կղզիների բնակիչները: Ջոն Գալտօնը հաղորդում է, որ Աստրոլիաբիա ծոցի մօտ ապրող մէկ վայրենի ցեղ չէ իմանում կրակ հանել, և երբ նրանց կրակը հանգչում է, վայրենիները ստիպուած են լինում գիմել հարևան ցեղերին կըրակ խնդրելու: Ամէն մի աւստրալիացու խոնթի առջև միշտ կրակ է լինում վառած, և երբ ճանապարհորդում են, նը-

րանք իրանց հետ տանում են խանձուխներ, որոնց երբէք չեն թողնում որ հանգչեն:

Նախնական մարդը գաղանների նման՝ հում մսով պիտի կերակրուէր. բայց կրակի հետ ծանօթանալուց յետոյ, նա ըսկըսում է միւր խորովել, ինչպէս ցոյց են տալիս կրօնոտան սահորները հետ գտնուած մոխիրը և անուխը, որ գտնուում են քարայրերի մէջ: Այդ ժամանակներում (époque quaternaire, ЧЕТВЕРТИЧНАЯ ЭПОХА) մարդիկ ապրում էին քարայրերում, և երկրի մեծ մասը պատած էր սառուցով:

Կրակի գործադրութեան հետ պիտի երևան գային հասարակական կեանքը, անային օջախը, արհեստները և այլն: Ուրեմն հասկանալի է, թէ ինչու շատ ազգեր պաշտում էին այն, և մինչև այժմ այդ մնացել է կրօնական ծիսակատարութիւնների մէջ:

Այն ժամանակը, երբ առաջին անգամ մարդ իւր համար կրակ ճարեց, այնքան հին է. որ այդ գիւտի մասին մնացել են միայն առասպելաբանական զրույցներ: Օրինակ, երկնքից կրակ գողացող Պրոմէթէոսի մասին յայտնի առասպելը, որ զրուցում է իբր թէ այդ զոգութեան համար Զեւսը նրան չըզթաներով կապեց Կովկասեան սարերի վրայ: Միևնոյն առասպելի վարկանաը պատահում է և զանազան վայրերի ցեղերի մէջ. օրինակ, Տալուրը պատմում է, թէ Վանդեմիսեան աշխարհի մէկ բնիկ ասել է Բարհուդին, որ նրա նախնիները կրակ անել չէին իմանում մինչև ևրօպացիների հետ ծանօթանալը, որ նրանք առաջին անգամ երկնքից են կրակ ստացել և խանձուխները պահել են իրանց մօտ:—Երբ Որմիզզը մարդկանց առաջի զօրքն ստեղծեց, այն ժամանակ զեւն երևաց և նրանց սովորեցրեց կրակ հանել՝ կոծոխորի փայտը շփելով աւազին (Զենդ-Աւեստա).—Հուսշիկ, Պարսկաստանի երկրորդ թագաւորը, ըստ Զենդ-Աւեստայի, առաջինն էր, որ կրակ հանեց, երկաթը կայծաքարին խփելով:

Նախնական մարդը կրակ հանելու համար գիմում էր միևնոյն միջոցների, որոնք գոյութիւն ունէին Ամերիկայի ընկնների մօտ Քրիստաֆօր Կոլումբի ժամանակները, և այժմ

էլ գեռ մնացել են վայրենի ցեղերի մէջ, Կրակ Հանելու ամենահասարակ և ամենանախնական միջոցը կայանում է ներանում, որ երկու կտոր փայտ իրար են շփում: Բայց փորձը շուտով պիտի ցոյց տայ, որ որքան փոքր է փայտերի քսուսը տարածութիւնը, այնքան արագութեամբ կարելի է նրանց վառել: Եւ իրաւ, այդ ուղղութեամբ էր ընթանում կրակ Հանելու գործիքների կատարելագործութեան առաջագիմութիւնը: Դրանցից ամենահասարակ գործիքն այն է, որ բաղկացած է ճիւղաօղից և տախտակի կտորից, որի երկարութեամբ փորած է մէկ նով (ЖЕЛОУН), Հէնց այդ գործիքն ունէին խաղաղ Ովկիանոսի մի քանի կղզիների բնակիչները, որոնք արագութեամբ քսում էին ճիւղաօղի ծայրը նովի երկարութեամբ և այդպիսով մի քանի վայրկեանում կրակ ըտանում: Բայց աւելի տարածուած էր վայրենի ցեղերի մէջ մէկ ուրիշ գործիք, որն աւելի կատարելագործուած է քան վերոյիշեալը: Սա ևս բաղկացած է երկու կտոր փայտից՝ մէկ ճիւղաօղից և մէկ տախտակից: Այս գործիքով կրակ Հանելու համար, ձեռքերի օփերի միջև տեղաւորում են ճիւղաօղ, որի ծայրը լննուած է լննում տախտակի վրայ, և օփերը շարժելով այս կողմն ու այն կողմը և մի և նայն ժամանակ օփերը ցածացնելով վերեւից ներքեւ, այդ ճիւղաօղին արագ շարժում են տալիս: Որպէսզի գործողութիւնն արագութեամբ առաջ գնայ, յաճախ երկու մարդ աշխատում են. երբ մէկի ձեռքերը մօտենում են ճիւղաօղի ներքեւի ծայրին, միւսը ըսկըտում է ճիւղաօղը պտտեցնել վերեւից, որ կրկնում է մինչև կրակ Հանելը: Հէնց այս միջոցով էին կրակ Հանում Աւստրալիայի բնակիչները, Սումատրա, Կարոլինիա կղզիների բնիկները, այս միջոցը մէկ ժամանակ զայութիւն ունէր և Հընդհատաւում. նա տարածուած էր Հարաւային Աֆրիկայում, Հիւսիսային Ամերիկայում և այլ տեղեր:

Կրակ Հանելու այս ձևը շատերի մօտ կատարելագործուած գրութեան մէջ էր գտնւում: Օրինակ, Էսքիմոսները փոխանակ անմիջապէս օփերով պտտեցնելու ճիւղաօղ, այդ նպատակի համար թոկ էին գործ ածում: Ճիւղաօղի շուրջը մի

քանի անգամ փաթաթում են այդ թուղը, որի ծայրերից բռնելով, այս-կողմն այն-կողմն են քաշում և այդպիսով արագ պատեցնում ճիպոտը: Բայց ճիպոտն ուղաճայեաց կանգնեցնելու համար անհրաժեշտ է, որ մի երկրորդ մարդ բռնի վերևից կամ թէ ինքը պատեցնողը բերանի մէջ ունենալով մի կտոր փայտ, այդ փայտով լինուի ճիպոտի վերի ծայրին:

Կրակ հանելու արուեստը մեծ առաջագիմութիւն արած է լինում, երբ թուղի փոխարէն սկսում են գործադրել աղեղը, որ չէ պահանջում ոյժի չափազանց լարումն այսպէս վերոյիշեալ ձևի գործողութիւնը շատ նման է մեր հիւսնեւրի ւմագիտութեամբնովն տախտակ ծակելուն: Այսպէս էին կըրակ հանում Հիւսիսային Ամերիկայի հնգիկները և ուրիշներ:

Կրակ հանելու վերոյիշեալ ձևերը քաղաքակրթութեան ազդերի մէջ արգէն հին ժամանակներում տեղ են տուել կայծաքարին և պողպատին. բայց թէպէտ վերացել են առօրեայ կեանքից, նրանք մինչև այժմ մի քանի տեղերում գոյութիւն ունին կրօնական ծիսակատարութեան մէջ: Հնգկատառնում, թէպէտ ժողովուրդը զարերից ի վեր կայծաքարի և պողպատի օգնութեամբ է կրակ հանում, բայց չնայած դրան, բրահմանները, երբ հարկաւոր է ւանաբատ և սուրբ կրակ ունենալ ամենօրեայ զոհաբերութեան համար, գեռ շարունակում են գործադրել այն միջոցը, որին դիմում էր նախապատմական մարդը, այսինքն արագութեամբ պատեցնում են սրածայր ճիպոտը զոհի փայտի վրայ շինած փոսում, մինչև որ կայծեր կ'ստանան:

Նւրագայի մի քանի տեղերում գիւղացիները շինեցանի կրակիցս վառում են խարոյկներ, սրունցով անցկացնում են իրանց ձիերը և տաւարը՝ ժանդախտից ազատ պահելու նպատակով: Խօյերայի վերջին համաճարակի ժամանակ ռուս մուժիկները այդ տեսակ կրակով էին աշխատում հիւանդութեան առաջն առնել:

Զրագաշար կառուցեց սեղաններ չորս կրակներէ համար՝ Փարանի, Հոսշասպի, Բուրգեն-Մեհերի և Բահրամի: Այդ չորս

զանազան տեսակ կրակները ստացւում էին զանազան միջոցներով՝ չոր փայտերի շփուելուց, կայծաքարից և երկաթից, կայծակից և նաւթի աղբւրներից:

Հին հասկմայեցիները առանձնապէս մեծարում էին կրակի աստուածուհուն — Վեստային, որի տաճարում արում էր անշէշ կրակը. այդ կրակը պահպանում էին վեստալուհիները: որոնք կոչւ պիտի մնային մինչև մահ, Բայց երբ պատահամբ այդ կրակը հանդիւմ էր, այն ժամանակ արգելուած էր սոփորական կերպով կրակ հանել. զբա համար քուրմները փայտի և ճիպտի ոգնութեամբ էին կրակ ստանում, այնպէս՝ ինչպէս վայրենիները:—Այդ բոլոր ծիսակատարութիւնների մէջ մնացել են հետքերն այն հեռաւոր ժամանակների, երբ նախնական մարդը կրակ էր հանում երկու կրտոր փայտի միջոցով:

Նրբ այդ կերպով կրակը վառվում էր, մարդը բնականաբար պիտի աշխատէր պահպանել նրան իւր պիտոյքների համար, բաղմաթիւ անտառների ծառերը և թփերը, լեռների միներալական նիւթերը, ծառերի խէժերը, վայրենի կենդանիների ճարպը—որոնք են վառելիքի և լուսաւորութեան աղբւրները, որոնք երևի գործադրվում էին ամենահին ժամանակներում ևս Եսքիմոսները հէնց այժմ էլ տաքացնում և լուսաւորում են իրանց բնակարանները միայն ֆօկի (FOKIL) ճարպով:

Մեր ժամանակները նվազագոյնում, Բազենում, Կուրլանդիայում և Ռուսաստանի շատ անդերում մովի փոխարէն գործադրում են թեղօշ (ՅՄԵՆ) ծառի երկար ճիւղերը, որոնց հորիզոնաբար ցցում են պտաի մէջ և ազատ ծայրը վառում. այդպիսով գիւղացիները էժան կերպով լուսաւորում են իրանց աղքատիկ խրճիթները: Հիւսիսային Ուկրանոսում զբաւուող Պերերեան կղզիները բնակիչները իրանց բնակարանները լուսաւորում և տաքացնում են տարօրինակ միջոցով: Այդ միջոցը կայանում է նրանում, որ Պինգվին թռչնին խկական լամպար են գարձնում, շնորհիւ այդ թռչնի մէջ զբաւուող ճարպի ահագին քանակութեան: Բաւական է Պինգ-

վինի փորտափքը հանել, կտուցի մէջ պաարայդ գնել, որ ստացուի հիանալի ձիթաճրագ, որ շարունակ այլուում է մինչև իւզի վերջին կտորը:—Ղաթարագի մի քանի տեղերում գիւղացիներն չորացրած օձաձուկը վառում են մօմի փոխարէն:

Թէ երբ է փայտը տեղի տուել կայծաքարին և երկաթին՝ յայտնի չէ: Մինչև ծծմբային լուցիւ երևալը, կայծաքարը և երկաթը տարանուան էր ամենուրեք: Փսան տարի սրանից առաջ Նուշուց շատ մարդիկ կրակ էին հանում միայն այդ գործիքով, սրոնց պահում էին մէկ փաքրիկ արկղի մէջ, որին տեղացիները անուանում են «փօտաման»: Այդ փօտամանի մէջ այժմ հիւաններն իւզ են պահում իրենց գործիքները օծելու համար: Փօտամանը 12 սանտիմետր երկարութեան, 6 սանտ. լայնութեան և 4 սանտ. բարձրութեան մի արկղ է, որի խոռոչը մի պատ երկու մասի է բաժանում ըստ լայնութեան: Պատի վրայ կայ մի առանցք, որի շուրջը արկղի պարարելուօգրումի ձև ունեցող խուփը շարժւում է հօրիզոնաբար: Մի խոռոչում պահւում են կայծաքարը՝ և 6 թուանչանի ձև ունեցող երկաթը, իսկ միւս խոռոչում ծծմբի մէջ թաթախած պաարայիկը և «փօտը», որը արեթի գեր է կատարում և ոչ այլ ինչ է, եթէ ոչ այլաձ չոր: Կրակ հանելու նպատակով կայծաքարին խփում են երկաթով, կայծերը թափուելով գիւրափառ փօռի վրայ, վառւում են նըրան, այդ ժամանակ այլուող փօռին մօտեցնում են ծծմբաթաթախ պաարայիկը, որ և անմիջապէս բոցափառւում է:

Այժմ «փօտամանը», ի հարկէ, գործածութիւնից դուրս է եկել և շատ դժուարութեամբ է ձեռք բերւում:

